ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՆՑ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

ԺՆԵՎ.- Այստեղ, Ազգությունների պալատում, հունվարի 28-ից ի վեր իր աշխատանքն է շարունակում ՄԱԿ-ի մարդկային իրավունքների հանձնախմբի 47-րդ տարեկան նստաշրջանը, օրակարգի վրա ունենալով 1990 տարեշրջանի ընթացքում աշխարհի տարբեր կողմերում ազգերի, հասարակական եւ տարիքային տարբեր խմբերի ու փոքրամասնությունների նկատմամբ ի գործ դրված հալածանքների, խտրականությունների, մարդկային եւ ազգային իրավունքների գծով խախտումների մասին տեղեկագրեր:

Հունվարի 30-ին նստաշրջանում արծարծվել է նաեւ Արցախի հարցը, իբրեւ ազգային ու մարդկային ինքնորոշման իրավունքի բռնաբարման կոպիտ օրինակ: Այն արծարծողն էր «*Մարդկային իրավունքների միջազգային դաշնակցությունը*», որի կենտրոնը գտնվում է Փարիզում: «*Նկատի ունենալով, որ Ադրբեջանում եւ Լեռնային Ղարաբաղում դեռեւս շարունակվում են հայ ազգաբնակչության դեմ իշխանությունների հալածանքները, շրջափակումներն ու հայերին արտագաղթի մղող արարքները,*- ասվում է տեղեկագրում,- *Մարդկային իրավունքների միջազգային դաշնակցությունը ՄԱԿ-ի մարդկային իրավունքների հանձնախմբից պահանջում է կողմ արտահայտվել Լեռնային Ղարաբաղում պարետային ժամի վերացմանը եւ տեղական իշխանությունների վերահաստատմանը՝ ընտրությունների միջոցով: Արցախի ժողովուրդը պետք է օգտվի իր ինքնորոշման իրավունքից՝ հանրաքվեի միջոցով, համաձայն Խորհրդային Միության սահմանադրության եւ Հասարակական ու քաղաքական իրավունքների Ուխտի*»:

ՄԱԿ-ի հանձնախմբի նստաշրջանը, որի աշխատանքներին մշտական 43 անդամ երկրներից բացի մասնակցում են նաեւ շուրջ 100 այլ երկրների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ 50 ոչ կառավարական կազմակերպություններ, իր նիստերը կավարտի մարտի 8-ին, եթե կհրապարակվեն նրա եզրակացությունները ու հայտարարությունները: